

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,  
կամ Tiflis, Rédaction «Mschak»,  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը լայն է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1900 ԹՎԱՅԻՆ

## ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

### ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ. «Մ» չափի տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն  
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ  
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի  
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա. մ. բ. ի կ ա յ ի բաժանորդները պէտք է  
վճարեն տարեկան 6 ռուբլի. Ե. և Բ. օ ղ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ա կ ա տ ա ն ի  
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ն գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՍՏԱՆԸ (Բաղադրանքային եւ Բարձրագույն փողոցների  
անկիւնը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ն գրվելու համար, եւ առհասարակ նամակ-  
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция  
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որքան վատնելի է.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՆԸ. Մամուլ. Գլխավոր մասնաժողովի նիս-  
տը. Մատենադարձութիւն. Նամակ Սփռախից.  
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—  
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱ-  
ՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նա-  
մակ Ֆրանսիայից:

#### ՈՐՔԱՆ ՎՍԱՀԱՅԻՒՆ

Մեզ հաղորդում են, որ Եջմիածինը մը-  
տադիր է մասնագէտ կառավարիչներ հրա-

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՆԱՄԱԿՆԵՐ ԾՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՑ

Պարիզ, յունիսի 2-ին

Անգլիայի «Եռյակապ առանձնութիւն» ար-  
տայայտվում է միշտ ոչ միայն իր աշխարհա-  
գրական գիրքի, իր քաղաքականութեան, իր  
միջազգային յարաբերութիւնների մէջ, այլ եւ  
իր փիլիսոփայութեան, իր գրականութեան, իր  
նիստ ու կացի, ընտանեկան եւ հասարակական  
բարբերի մէջ: Զարմանալի է, որ անգլիական  
գեղարուեստն էլ մի հոյակապ առանձնութիւն  
է ներկայացնում ցուցանանդեւում: Որ ընդ-  
հանուր, համաշխարհային մի քաղաքակրթու-  
թիւն կայ, որ իր լայն կաղապարի մէջ ընդ-  
հանուր նման գծերով ձուլում է բոլոր ժողո-  
վուրդներին, դա անկասկած է, ինչպէս եւ  
այն, որ այնու ամենայնիւ այդ կաղապարի  
մէջ անգամ ամեն մի ժողովուրդ իրան յատուկ  
սեպտերից չէ հրաժարվում. բայց ոչ մի ազգ  
իր անհատականութիւնն այնպէս չէ շնչում  
գիտութեան եւ արուեստի բոլոր ճիւղերում,  
իր մասնաւոր, թէ հասարակական յարաբե-  
րութիւնների մէջ, ինչպէս անգլիական ազգը:  
Դեռ հարկւր եւ աւելի տարիներ արանից ա-  
ռաջ, Վոլտեր, Լամանչն անցնելով, Ֆրանսիա-  
յից մի քանի ժամկէտ ճանապարհ այն կողմը  
մի նոր աշխարհ գտաւ միանգամայն տարբեր  
իր հայրենիքից: Մարտմ դը Ստալը հիաց-  
մունքով եւ զարմանքով է խօսում անգլիա-  
կան բարբերի մասին: Կարելի է առել, որ  
այժմ էլ պատկերը նոյնն է համեմատաբար:  
Անգլիան Եւրոպայի մէջ մի այլ Եւրոպա է  
ներկայացնում եւ կարծես բոլորովին արմա-  
զութիւն չունի հրաժարվել իր առանձնու-  
թիւնը պայմանաւորող տրադիցիաներից: Գո-  
նոջ Ալբրոն, Հետեւեալ օրինակը գուցէ մի  
քիչ բանալ է, բայց բաւական որոշ: Յայտնի

էրիւ իր կալուածները կառավարելու  
համար: Տարիների ընթացքում յայտնված  
ցանկութիւնները այժմ կամայականաբար ըս-  
կաւում են զգացվել իրենց անհրաժեշտու-  
թիւն եւ կենսական պահանջ: Արեւելք է  
դարձել, որ վաղուի ձեւերով անկարելի է  
գործ առաջ տանել: Այժմ նկատվեց, որ  
կալուածների եկամուտները, փոխանակ  
աւելանալու, նուազում էին, կալուածը-  
ների հողերում սկսում էին հաստատվել  
մի շարք օգտվողներ, որոնք այլ եւս չէին  
ցանկանում ձեռք քաշել այդ տեղերից,  
ցանցեր էին ավելում բոլոր շրջակայքում:

է, որ Պարիզը զգեստների իր տարազով տոն  
է տալիս ամբողջ աշխարհին եւ քաղաքակրթ-  
ված կանայք, երկրագնդի բոլոր ծայրերում,  
աչք տնկած սպասում են թէ Պարիզը La fem-  
me de monde-ը ինչ կաւէ այս ինչ գոյնի  
կօճակի, կամ այն ինչ հանգուցի ծաղերի մա-  
սին: Զարմանալի չէ, որ պարիզուհուն հետեւ  
լեւով քաղաքակրթված աշխարհի կանայք ճա-  
շակուտ են գտնում փողոցում շրջելիս թէ-  
կուզ չոր չոր, մաքուր մայրի վրա անպատ-  
ճառ փէշերը ձեռքով բռնած գնալ, երբեմն եր-  
կու կողմից բարձրացնել անհամեստութեան  
չափ: Սակայն անգլուհին նոյն իսկ Պարիզում  
այդ սովորութեանը չէ հետեւում: Նա կարծես  
զբաղուած զբաղվելու ժամանակ չունի, նրա չըր-  
ջազգեստի փէշերը միշտ անքնն կարծ են, որ  
գետին չեն հասնում, գլխարկի վրա փետուր  
չունի, չարժուանքը առնական են: Բայց դա-  
նանք մեր գործին:

Եթէ անգլիական գեղարուեստը դատենք այն  
նկարներով, որոնք ի ցոյց են դրված այստեղ,  
ապա չենք վարանի սակով, որ Անգլիան այդ  
ճիւղի մէջ էլ առանձնացած է: Պատկերների  
ոճն այնքան խիստ է, զծերն այնքան չոր,  
դէմքերի ժպիտն ասես տակտով է կատար-  
վում, կարծես մի անողոք ձեռք է չարժիլ այդ  
վրձինը, չը թոյլ տալով, որ գեղարուեստական  
որ եւ է կապրիզ, մի թոյլ գիծ, մի անհոգ  
խաղ խուսափի: Նայեցէք այդ պղնձէ դէմքե-  
րին, որոնք ոչ մի միտք դաւաճանել չը գի-  
տեն. նայեցէք այն նկարին «Օմալային Իգիլ-  
լիս»-մի երիտասարդ զոյգ է նաւակի մէջ խա-  
ղաղ ծովի վրա. երկու դէմքերն էլ տղամարդի  
պէս են. նրանց վրա չը կայ նկարված ոչ ինե-  
լազար երազ, ոչ մատաղ սրտի բուռն յոյզ:  
Սէրը սրտերում չէ, այլ գլուխներում, նրանք  
խոնուն են. կարծես իրանց միայնութեան այս  
անզուգական ժամում, սիրոյ այսքան քաղցր  
վայրկեանում նրանք մտածում են այն մասին,  
թէ իրանց ապագայ զաւակները, կամ գուցէ  
եւ թո՛ղները բաւականաչափ ապահովված կը  
լինեն ներթապէս թէ ոչ: Կանացի մերկութիւն

ուստի եւ նրանց դէմ մաքառումը դառ-  
նում էր մի դժուար եւ ծանր գործ:

Հարկաւոր են նոր գործողներ, մասնա-  
գիտական պատրաստութիւն ունեցող ան-  
ձինք: Անկասկած, այդպիսի անձինք կան  
եւ կարելի է կազմել խելացի ղեկավարնե-  
րի մի ամբողջ խումբ, որ մի քանի տարի-  
ներ գործելուց յետոյ կարգի կը դնէ կա-  
լուածների տնտեսութեան գործերը եւ  
կը սկսի աւելացնել նրանց եկամուտները:  
Սակայն ամենքը մի հարց են տալիս, թէ  
նրան կայուն են այն պաշտօնները, որ  
պէտք է ստանձնեն մասնագէտները: Պէտք  
է արդեօք նրանք գտնեն ճշակցութիւն  
եւ պաշտպանութիւն իրանց գործունէու-  
թեան ընթացքում, թէ նրանք էլ պէտք  
է զո՛ք գտնեն այն պատեհականութեան, որ  
գործին տարիներ յուսալիս արեց բազ-  
մաթիւ մարդկանց: Դա շատ կարեւոր  
հարց է եւ հոգեւոր իշխանութիւնը պէտք  
է աչքի առաջ ունենայ, որ խնդրի գործ-  
նական լուծման ժամանակ անխտաճու-  
թեան զգացմունքը կարող է մեծ խնդրոտ  
հանդիսանալ նոր ծրագիրներ իրագործե-  
լու համար:

Պէտք է բոլորն էլ համոզվեն, որ հոգե-  
ւոր իշխանութեան ներկայ որոշումը լուրջ  
է եւ հաստատ, որ նա չէ փոխվելու մի  
քանի ամսից կամ նոյն իսկ մի քանի շա-  
բաթից յետոյ եւ որ սկսած գործը պէտք  
է ունենայ անընդհատ շարունակութիւն  
եւ յաջորդականութիւն: Այն էլ պէտք է  
աչքի առաջ ունենալ, որ մասնագէտները  
պարապ չեն նստած մինչեւ որ Եջմիածինը  
նրանց կը հրաւիրէ: Նրանցից իւրաքան-  
չիւքն ունի իր պարագմունքը, իր լաւ  
թէ փառ պաշտօնը, որ կարող է թո՛ղնել  
միայն որոշ ժամանակից յետոյ եւ յայտնի  
ապահովութեամբ: Ուստի զարմանալի չի  
լինի, եթէ մասնագէտների առատու-

իզուր կը փնտռէք անգլիական բաժնուէ Այդ  
չոր, ինքնավար միասնը, իրանց խիստ դի-  
մազներով ասես ձեզ հրաւիրում են մտածել,  
աչքերում պլանքի, կրքի արտայայտութիւն,  
մեղկութեան մի գիծ չը կայ, իրար սղմած  
չրթուքները համար չեն խնդրում, վնասալ-  
կանքն չեն, իրն են, որ մայր դառնալ գիտեն,  
երբ սիրելցիւն երեւի յաւիտեան կը սիրեն:

Ես համոզված եմ, որ եգիպտական բնու-  
թիւնից սրւթէ վերցնող եւրօպացի նկարիչը  
անպատճառ կամ սփիւքանք կամ այլովստ պի-  
րամիդներ կամ դէպի միասնիցմը տրամադ-  
րող անապատները կը նկարէր եւ դրա հետ  
միասին ֆելլաշ կիւրէ իր անհոգ կիսամերկու-  
թեան մէջ, կայրէի կուռերին, երեկոյեան զով  
քամուն էր հարուստ կուրծքը դէմ արած:  
Բայց գիտե՛ք ինչ է նկարել անգլիացի արտիս-  
տը—ինչպէս են խուզում ոչխարները... Որքան  
բէպիլով կայ այս նկարի մէջ. անգլիացի եւ  
իր գաղթականութիւնների իսկական պատկե-  
րը չէ այս. ուր չէ խուզում Անգլիան:

Իւրաքանչիւր պետութիւն իր բաժինը դար-  
դարել, դասաւորել է ըստ իր ցանկութեան եւ  
ճաշակի: Այս կողմից պատկառանք ազդող լը-  
ջութիւն ունի գերմանական բաժնի մի քանի  
դանիշներ զարդարանք, որ կատարված է  
կրասիկ ճաշակով: Գերմանիան ի ցոյց է դրել  
համեմատաբար աւելի կենդանագիրներ քան  
պէշապէս, կան նաեւ գերմանական գիւղա-  
կան նիստ ու կացը ներկայացնող պատկերներ,  
հաստ, ուժեղ գեղջուկներ ու գեղջուկներ,  
անպատճառ մի ճակատամարտ եւ վերջապէս  
Վիլհելմ II-ը:

Հօլանդիան իր տիպերով բաւական նման է  
Գերմանիային: Այստեղ էլ ամեն ինչ հաստ է,  
բիրտ, անասուններն անագին, իւզոտ, խոնաւ  
միջնորդ, ծանր, մատախաղաղ երկինք, հա-  
րուստ մարգագետիններ, հիւթալի կանաչ, որից  
ասես կաթ է հոսում:

Թիւրքականութեան արդէն բաւական երկարից,  
եւ էլ կանգ չեմ առնի միւս ազգերի բա-  
ժինների վրա, բայց ես պատկանից: Բայց

Թեան միջոցին չը գտնվեն ազատ մարդիկ  
Եջմիածին համար:

Հաստատ գործ սկսեցէք եւ հաւատ  
ներշնչեցէք ուրիշների մէջ, որ ձեզ հետ  
կարող են լուրջ եւ կանոնաւոր յարաբե-  
րութիւնների մէջ մտնել, այն ժամանակ  
կը սկսեն մօտենալ պատրաստված մարդիկ  
եւ հանդէս կը բերեն իրանց ոյժերը եւ  
ընդունակութիւնները գործելու մի առ-  
պարէզում, որ վաղուց սպասում է իր աշ-  
խատողներին:

#### ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ութ ամիս արեւն թափելուց, մի միլիարդ  
բոլորի ծախսուելուց յետոյ, անգլիական կառա-  
վարութիւնը, վերջապէս, կարողացաւ մի լաւ  
«Ժամանակ» սարքել բօրային վաճառքների  
համար: Եօհանէսուրը, ոսկու հանքերի հայ-  
րենիքը, անցաւ բրիտանական զօրքերի ձեռքը:  
այդ օրին ութ ամիսից ի վեր սպասում էին  
վաճառքները եւ այժմ շտապում են օր առաջ  
հասնել Տրանսիլանիայի այդ քաղաքը, որ ներկայ  
պատերազմի միակ պատճառն է: «Русскія  
Вѣд.» լրագրի թղթակիցը գրում է Լոնդօնից,  
որ Հարաւային Աֆրիկա գնացող բոլոր մար-  
դատար շոգնաւերում սենեակ վերցրված են  
երեք ամսվայ համար. անա թէ ինչքան շատ  
են գիշարիչ բօրայականները եւ ինչքան մեծ  
է նրանց մէջ ցանկութիւնը որքան կարելի է  
չուտ հասնել արեւնաթափալ դիակին, որից  
ոսկու կոյտեր են հանվում: Բայց ինչ սարսա-  
փելի գնով է ձեռք բերվում վաճառքների այդ  
յաղթանակը: Անգլիան, բայց մի միլիարդից,  
կորցրել է մինչեւ այժմ 50 հազար մարդ: Անա  
ինչ է գրում «Westminster Gazette» լրագրի  
վիբաւորված թղթակիցը.

Մենք վերադառնում ենք Անգլիա մի շո-

ինչպէս մոռանաւ Թիւրքիան, արեւնի արուես-  
տի կրակակալն դարձած հայրենիքը, Երեք  
դանիշներ կան յատկացրած այն ազգերին,  
որոնք պաշտօնական տեղ չունեն գեղարուես-  
տական բաժնում. այստեղ, այս ժխորի մէջ  
միայն սուլթան Համիդի հովանու տակ երջան-  
կացած երկրի անունը կայ: Թիւրքական գե-  
ղարուեստ, զարմացած հարցնում են իրար  
այցելուները: «Ուրեմն սօփոսանքը նկարչու-  
թեամբ էլ են պարագում»: Այո, թիւրքական  
գեղարուեստ, եւ ինչ արագիւրական է. այդ  
գեղարուեստն այստեղ ներկայացնողները երեք  
հայ արտիստներ են: Հետաքրքիր է իմանալ թէ,  
եթէ իսլամի քանդակչութեանը այդ երեք հայն էլ  
զոհ գնային տաճկի եսթապանին, էլ ոչ պատի  
օտոմանների զարմանալի արուեստն աշխարհին  
ցոյց տար: Կայր, ապերախտ թիւրք...

Ես պատկանում եմ արեւելի եր-  
կար տեսութիւն նուիրելու հարկը տեսալ, ո-  
րովհետեւ ծայրագոյն արեւելքի այդ կուլտու-  
րական ժողովրդի գեղարուեստը իր ինքնու-  
րոյն կողմերով տարբեր ցեղի հանձնարի վերին  
աստիճանի բնորոշ կնիքն ունի վրան եւ հէնց  
այս պատճառով ազգայնական անհատականու-  
թեան, ազգայնութեան գաղափարի հիմնաւո-  
րութեան մի հրաշալի ապացոյց է: Որքան եւ  
տխուր լինի երեւոյթը, այնու ամենայնիւ ի-  
րողութիւն է, որ ոյժը, բարականութեան թըշ-  
նամի բիրտ զօրութիւնը տակաւին անկարող  
է լինում հասկանալ, որ ժողովուրդների ան-  
հատականութիւնները, որքան եւ թոյլ արտա-  
յայտվելիս լինեն նրանք, սրբագործված են  
ընական օրէնքներով:

Բնութիւնը մի հակադաս վիճակ է, որ խո-  
րախորհուրդ գաղտնիքների անբաւականութիւն ու-  
նի թաղցրած իր կրծքի տակ, գաղտնիքներ  
սակալի, որ նա պատրաստ է լոյս աշխարհ հա-  
նել, յանձնել մարդուն յաւիտեականապէս մի-  
այն վերջինիս հանձնարի, յամառ, յարաւան ճի-  
գերի, քրտինքի գնով: Իւրաքանչիւր ցեղ, իւ-  
րաքանչիւր ժողովուրդ կոչված է տնջելու յա-  
ւիտեական վնաս պայքարի այդ նուիրական



Ա. Ահարոնեան



դատել առաջին հատորով, դեռ չէ հասել իր զարգացման գագաթնակետին, թէև այդ նոյն առաջին հատորում պարունակված վէպիկներից մէկը (Тоска) մէջ Կոստանյի եւ Տանիայի երգեցողութեան նկարագրութիւնը իր գեղարուեստական արժանաւորութիւններով ոչինչով պակաս չէ, մեր կարծիքով, Տոբոլսկի-Վի գրութիւններէն մէկը—«Երգիչները» (Певцы):

Բացի իր առաջին չափից Մակարի Գորկիի աչքի է ընկնում եւ այդ տաղանդի բնագործութեանը, Զորիկ չը լինելով բոլոր ուսուցողներէն յատուկ քննադատութիւնի, որ նրա գրութիւններում երբեմն ձուլվում է նոյն իսկ անտառային լեռնային (ор. ОДНАЖДЫ ОЧЕНЬ БЫЛО ВОДОСЬ), Մակարի Գորկիի հազուադէպ երեւոյթ է ներկայացնում ուսուցչականութեան մէջ իր տաղանդի անսակմանութեամբ:

«Մերիկը ծովում եւ ամպերը դաշտում», եւ չը գիտեմ աւելի վեր երեւոյթներ բնութեան մէջ»,—բացականչում է Գորկիի հերոսներէն մէկը (213 եր.) Այդպիսի հերոսներով է ոգևորվում Գորկիի եւ նրա գրութեան մէջ լուրջ եւ ինչ որ ներքին մարտիկներ զու մը-նայինները Անտական, մրկաւոր, բնութան տա-ղանդ է Գորկիի տաղանդը: Նրա գրութեան մէջ առաջին հատորի երեւոյթ կարելի էր ամենայն իրաւունքով գրել РАЗКАЗЫ О МЯТЕЖНОЙ ЖИЗНИ («Ըմբոստ կենցիկ պատմութիւններ»), գործ ա-ծելով այն բանը, որով ինքը ճշդիւ նկարագրու-նել է Պառաւ Իզդրիկի պատմածներից մէկը (եր. 117):

Ինչ վերաբերում է Գորկիի դաւանած աշ-խարհայեցողութեան, վաղուց ուսուցող վիպագրու-թեան մէջ չէ լսել այնպիսի ջերմ քաղաք յա-նուն անհատի պատմութեան, ինչպէս Գորկիի գրութեան մէջ: Համակրելի տիպերը ուսու-վէպի մէջ եղել են առհասարակ խոճի մարդիկ, հեղ աշուրիներ, յաճախ կամքից եւ բնա-ւորութեան զորեղ գործի անհատներով: Գոր-կի նոր օրի էն տալիս է մոյցնում ուսուցող վիպագրութեան մէջ, չեղանով այն նշանակու-թիւնը, որ ունի մարդու բարոյականի տեսա-կէտից պատուի զգացմունքը, անհատական ա-զատութեան գիտակցութիւնը: Զորեղ, ինքնու-րոյ, ինքնավար անձնատուութիւն,—այն ուր են ուղղված Գորկիի համակրութիւնները: Այդ կողմից նա նոյն իսկ ծայրահեղութեան մէջ է ընկնում եւ նրա գրութեան ներկայանում են իրեն առաջադրել ինչպէս փոխադրու-թեան, որի մէջ նոր ճշմարտութեան թանկագին ցորենը շատ տեղ խեղդում է պարագայների եւ անհեթեթիւ թիւերների որոնքները:

Գորկիի ոճը գործի է, բայց յաճախ գուրկ պարզութիւնից եւ փոքր ինչ սեթեւեթ (ма-нежный):

Գորկիի դեռ երիտասարդ է,—երեւոյթները կամ երեւոյթներ տարեկան: Նա ինքնուս է, ծնվել է արհեստավար ընտանիքում, անցրել է պատմականութիւնը, աշակերտութեանը ամեն տեսակ արհեստավարների մօտ, իսկ երիտա-սարդ հասակում ստիպված է եղել հաց վա-տակել հասարակ բանտարկութեամբ, երբեմն իր-նու փայտ ջարդող, երբեմն իրեն բեռնակիր նաւակայանում Մի ժամանակ նա բանել է նոյնպէս եւ մեր քաղաքում, Թիֆլիսում, եր-կաթնուղի արհեստանոցներում եւ նրա առա-ջին վէպիկը տպվել է «Кавказ» լրագրում: «Մակարի» № 82-ում մենք տուինք Գորկիի վէ-պիկներից մէկի թարգմանութիւնը:

S. Յ.

ՆԱՄԱԿ ՍՂԱՆԻՑ

Մայիսի 21-ին

Մեր դաւանյի այժմեան կազմի այս տարի աւարտում է իր պաշտօնավարութեան չրջանը: Արդէն ստացվել է նահանգապետից կարգա-դրութիւն՝ ներկայացնել ցէնոյ ունեցողների ցուցակը հաստատելու համար, որից յետոյ կը ստացվի ձախաւորների ընտրութեան հրահանգ: Այս առիթով քաղաքագլուխը հրահել կարգաց հասարակութեան՝ շուտով վճարել քաղաքային տուրքերը, որպէս զի շատերը ձայնից չը զբո-ղւն: Սկսում են պատրաստութիւններ տեսնել ընտրութիւններին առիթով: Կայ մի խումբ, որ աշխատում է ընտրել տալ մեծ մասամբ երի-տասարդներին: Մենք առիթ ունեցանք դրանց թիւնածոնների ցուցակը կարգով, որ աշուղ է կազմված, իսկ թէ որչափ երիտասարդ ուղիքը յաղթող կը հանդիսանա, այդ ցոյց կը տա մօ-տիկ ապագան:

Հատորի Մաղարո գիւղերը եւ Նուրիկանի արտադրանքն մի մասը 1886 թ. միացան Սղ-նայի հետ ու այդ տեղերի բնակիչները քա-ղաքացիների կոչում ստացան: Սակայն գիւ-

ղացիներին ծանր են թուացել քաղաքային հարկերը, ուստի դիմել են նահանգապետին խնդրով՝ անջատել իրանց քաղաքից ու վերա-դարձնել նախկին գիւղական կարգերը:

Մեր հասարակութեան անտարբերութեան մասին շատ անգամ է գրվել: Անցեալ նամա-կով հաղորդել էինք, որ ապրիլի 3-ին կայա-ցած ծխական ժողովում վճովեց նոր բազմա-մարդ ժողով գումարել՝ այդ ժողովում յարույ-ված հարցերը վճռելու համար, բայց այդ տա-րաբար ժողովը չէ կայանում: Հրաւիրում են, բայց չեն գալիս: Եւ մեր հասարակութիւնը դարձեալ իրաւունք է համարում տրտնջալու իր ընտրած մարդկանցից...

Յուրա ամիսն է մայիսը. յաճախ անձրեւներ են գալիս, որոնք վնաս տուին ցանքերին: Անցեալ ուրբաթ օրը Կարգանայի գիւղը եւ-թարկվեց կարկտի. կարկուտը մեծ վնաս է հասցրել խաղողի այգիներին:

Վերջապէս սղնախեցիներն կուսնանք վա-ղուց ցանակել բաղանիք: Մի վրացի աստիճա-նաւոր, պ. Գամբելի, չինում է քաղաքի բեր-դում բաղանիք. որը շուտով պատրաստ կը լինի: Բաղանիքը կուսնանայ անհրաժեշտ յար-մարութիւններ:

Մենք մի անգամ առիթ ենք ունեցել գրե-լու, որ կար ու ձեւ գլուխը բացակայութեան պատճառով կանաչի արհեստը Սղնախում ծաղ-կած չէ: Այժմ այդ անյարմարութիւնը վերա-նում է. մի քանի ամիս է, ինչ մի վրացուհի, իշխանութեան թոյլտուութեամբ, բացել է կար ու ձեւի գլուխը, ուսումը աւանդվում է երեք տարի 25 ր. վճարով: Պէտք է կարծել, որ գլուխը, չնորհի վճարի մատչելիութեան, կը գրաւի աշակերտութիւնների բաւական թիւ:

Յ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Մասկվա, մայիսի 12-ին

«Մշակի» խմբագրութեան անունով ժամա-նակին տեղափոխել եմ երկու հազար ինը հա-րիւր (2900) ր. Ախալքալաքի երկրաչափից վնասվածների օգտին՝ ժողոված Մասկվայի հայ հասարակութիւնից: Ծննդեան եւ Զատիկի տօ-ներին հաւաքվեց եւ թիւրքաձայն սովորաւոր-ների օգտին երկու հազար չորս հարիւր ութ-սուն եւ ութիս (2488 ր.), որը տեղափո-խել եմ Կ. Պոլսի հայոց պատրիարքին:

Այդ երկու գումարների նուիրատուներն են. Եղբ. Ժամարեաններ 500 ր., Գէորգ Լիւնո-զեան 300 ր., Հեղինէ Միսնասարեան 100 ր., Մովսէս Մանարեաններ 100 ր., Սարգիս Մա-նուկեան 100 ր., Յովհաննէ Տէր-Յակովբեան 300 ր., Ա. Արթուրեան 100 ր., Աբուհա Մարտի 100 ր., Եղբ. Գոգոսեաններ 100 ր., Գէ-որգ Կարապետեան 100 ր., Եղբ. Թամանյաններ 100 ր., Ալեքսանդր Թորոսեան 100 ր., ԼԵՅԵ ՅՅԵԼՈՎԻՅ 100 ր., Տիրուհի Պապուկեան 300 ր., Միսնա Շորոշեան 300 ր., Աննա Ստաւր-բեան 100 ր., Բ. Արդուսեան 100 ր., Մուկ-վայի Եկեղեցական խորհուրդը 100 ր., Լազա-րեան ձեւարանի մի խումբ աշակերտներ 52 ր., Բ. Գանդուկեան 25 ր., Բ. Կուսկեան 10 ր., Եղբ. Գէորգեաններ 100 ր., Միսնա Լազարեան 25 ր., Սարգիս Մէլիքեան 25 ր., Համազասպ Աֆրիկեան 25 ր., Աւետիս Պոգոսեան 25 ր., Յովհաննէ Աւետիսեան 50 ր., Սարգիս Դու-բարեան 25 ր., Մարտիս Բաղդասարեան 25 ր., Միքայէլ Միրզայան 25 ր., Նիկողայոս ինչպէս 25 ր., Ուն 10 ր., Ալեքսանդր Մա-տիսեան 25 ր., Նիկող. Սիմեոնեան եւ Ա. Ա-զիզեան 25 ր., Եղբ. իսաճանեան 75 ր., Ա. Սարգսեան 50 ր., Գէորգ Տէր-Մկրտչեան 1 ր., Կարապետ ինչպէս 25 ր., Գէորգ Տէր-Յա-րութեան 10 ր., Աւետիս Մանուկեան 100 ր., Գ. Գառնարեան 5 ր., Յովհաննէ Լազա-րեան 5 ր., օր. Սանդուխտ Եղիազարեան 3 ր., Եղիաբեթ Արէշեան 3 ր., Եղիա-նիկ Լալայեան 10 ր., Հ. ի. 3 ր., Ե. Կատա-րինէ ինչպէս 50 ր., Մատթէոս Շամբա-րեան 5 ր., Գէորգ Թանդեան 3 ր., Ուն 3 ր., Բ. Արդուսեան 2 ր., Ուն 1 ր., Սարգիս Գ. Ալեքսանդր Արարատեան 5 ր., Յովհաննէ Կա-րմիկեան 5 ր., Ա. Յակովբեան 3 ր., Յովհան-նէ Ատուկեան 5 ր., Ն. եւ Կ. Կուսկեան-ներ 8 ր., Յովհաննիսեան 3 ր., Իսապանեան 3 ր., Հայրապետ 2 ր., Բուրիսեան 3 ր., Ուն 1 ր., Փանոսեան 12 ր., Հայրապետ 25 ր., Եղիապետ 1 ր., Ուն 1 ր., Ուն 1 ր., 45 ր., Մ. Փանոսեան 3 ր., Ա. Կառապետեան 10 ր., Դիւլեյեան 3 ր., Գ. Փանոսեան 5 ր., Գա-նդուկեան 3 ր., Յովհաննէ 5 ր., Ուն 5 ր., Յարութեան 1 ր., Մկրտչեան 5 ր., Կու-սկեան 3 ր., Պապուկեան 1 ր., Անայոս 3 ր., Անայոս 1 ր., Բաղդասեան 45 ր., Հովհաննէ եւ Նուրի Իզմիրեաններ 2 ր., Եղիապետ 3 ր., Լուսապետ 5 ր., Կարապետեան 5 ր., Ուն 1 ր., Գառնարեան 1 ր., Ուն 1 ր., Եղիապետ 1 ր., Ուն 50 ր., Ուն 50 ր., Ուն 1 ր., Ներսէս Սարկաւազ 3 ր., Շապի-րեան 1 ր., 50 ր., ինչպէս 2 ր., Եղիաբեթ Սարգսեան 10 ր., Գրաւոր 3 ր., Նիկողայոս Զանգեան 25 ր., Մկրտչ Տէրեան 10 ր., Ն. 5 ր., Գրիգոր ինչպէս 25 ր., Հայ ու-

սանդուկներ 5 ր., Հայ ուսանողներ (Աւետիս մանգուլ) 198 ր., Գ. Զատուկեան 25 ր., Գանահայից 5 ր., Գ. Սուլթանյան 25 ր., Սարգիս Յակովբեան 25 ր., Իզդարեան 15 ր., Եղիա Օղարաշեան 50 ր., Ե. Արամեան 7 ր., 50 ր., Հայ ուսանողներ (Աւետիս մանգուլ) 293 ր., Ա. Տէր-Մկրտչեան 25 ր., Գանահայ աւեր-Ն. 1 ր., Բ. Գառնարեան 3 ր., Անուշա-ւան Մկրտչեան 2 ր., Ներսէս Սարկաւազ 3 ր., Ուն 1 ր., Գերասիմ Ար. Գանահայեան 10 ր., Կարապետ Զարիֆեան 6 ր., Աննա Վրասեան 3 ր., Մի ուս 1 ր., 20 ր., Գանահայ 213 ր., 16 ր., Գանահայ 103 ր., Թեւան Յովհաննի-սեան 25 ր., Գանահայ 257 ր., 73 ր.:

Բազմապատկեր Վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ պրոֆէսոր Մուշ-կետով, որ գնացել էր Ախալքալաքի գաւառը երկրաչափին ենթարկված չրջանը հետազո-տելու նպատակով, վերադարձաւ Թիֆլիս եւ ուղեւորվեց մայրաքաղաք: Մուշկետով այ-դպէս վնասված գիւղերը, Տաղաշտուր եւ Տօգորձան լճերը եւ հարց ու փորձեր ա-րեց բոլոր չրջանում: Նրան չէ աշուղվել բարձ-րանալու Արուս սարը ձիւների շատութեան պատճառով: Պրոֆէսորի յայտնած մի քանի ենթադրութիւնների մասին մենք կը տանք մի համառոտ տեղեկութիւն հետեւեալ անգամ:

Կովկասի բժշկական վարչութիւնը խնդրում է 1000 ր. կրէդիտ արտակարգ դէպքերում մի բախտէրիւրդ-բժիշկ ուղարկելու մեր երկրի այն տեղերը, ուր երեւում են սուր-վարակիչ հիւանդութիւններ:

Զորեղաբեթի, մայիսի 31-ին, Վարդիս-Ճա-լայի մօտ, Սօղանլուի ճանապարհի վրա, Թիֆլիսի գաւառում, առաւօտեան 6 ժամին, ձկնորսները տեսան գետափին կապ մի արկղ, որի մէջ դրված էր մի մարդու դիակ, նոր կէտնկալով փաթկնված: Իսկոյն ինչպիսիք ոստիկանութեանը եւ դատաւանական իշխա-նութիւններին: Երբ արկղը բաց արին, տեսան, որ դիակի ոտները կտրտված եւ գրված են բնի հետ: Սպանվածի գլուխը արկղում չը կար: Դիակը բոլորովին թաքն էր եւ, բժիշկների կարծիքով, սպանութիւնը կատարված է մայի-սի 30-ի գիշերը:

Մայիսի 31-ին կայացաւ Թիֆլիսում էլէք-տրական լուսաւորութիւն մոյցնելու համար կարգված խմբագրութիւնի նիստը: Այդ նիստին «Գէլիոս» ֆիրմայի լիազօր ներկայացրեց այդ ֆիրմայի նախահայր եւ վերջնական պայ-մանները: «Գէլիոս» ֆիրման համաձայնվում է էլէքտրական լուսաւորութիւն մոյցնել մեր քա-ղաքում 430,000 բուլբուլ, տալով քաղաքին 14 տարի ժամանակամիջոց: Այս ֆիրման խորհուրդ է տալիս քաղաքին, փոխանակ սե-փական էլէքտրական կայարան ունենալու, հա-մաձայնութիւն կայացնել Անտիմ ընկերութեան հետ եւ օգտվել այդ ընկերութեան էլէքտրա-կան էներգիայից:

Թիֆլիսի քաղաքային դումայի մէջ գործող մի յատուկ խմբագրութիւն, որ քննում է քա-ղաքում ծախսող մի գինը, իր վերջին նիս-տում, հիմնվելով նոր փորձերի վրա, եկաւ այն եզրակացութեան, որ տաւարի մի գինը պէտք է իջնայնել, որովհետեւ Թիֆլիսի շուկայում ա-ւելացել է մտացու կենդանիների քանակու-թիւնը եւ նրանց գինը գգալել կերպով ընկել է: Քաղաքային վարչութիւնը մտադիր է դումայի առաջիկայ նիստին առաջարկել փոխելու մի սակագինը:

Բժիշկ Ա. Բուդուղեան ուղարկել է մեզ իր նոր կազմած «Վնեւրական անտեր» գրքից 500 օրինակ Ախալքալաքի երկրաչափից վը-նասվածների օգտին: Ներկայ գրքից, որ կազ-մում է հեղինակի առողջապահական գրագա-րանի վեցերորդ հատորի, բաղկացած է 58 փոքրադրեր երեւոյթից եւ արժէ 5 կոպէկ:

ՍՂԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Մի քանի օր առաջ Թիֆլիսի մի հայ վաճա-րական տեղացի մի հայ վաճառականի ուղեկ-ցութեամբ տանում է դատաստանական պրիս-տաւի պաշտօնավարարին Ներքին Մաշինային գիւղը գիւղական լճիկի գոյքը ցուցակագրելու համար, որը պարտ էր եղել առաջին փող, բայց չէր կապնել տալ: Բժիշկը այդ ժամանակ ձայն էր եղել հրաւիրված Մաշինայի գաւա-ռամասի պրիստաւ. իշխան էր թափօքի մօտ: Պարտատէրը հրաւիրել է բժիշկին գալ իր տա-նը, սակայն նա չէ եկել, ուստի պրիստաւ

պաշտօնավարարը ցուցակագրում է պարտա-պանի գոյքը: Այս ժամանակ վրա է հասնում պրիստաւ իշխան էր թափօք եւ բարկացած՝ սկսում է յանդիմանել եւ անվայել խօսքերով հայտնել թէ պարտատէրը եւ թէ նրան ու-ղեկող վաճառականին: Պրիստաւի գալիսը ի համար է այն աստիճանի, որ պարտական է երկուսին էլ: Հայ վաճառականները համե-րութեամբ տանում են այս անպատուութիւնը, սակայն պրիստաւի դէմ բողոք են ներկայաց-րել դատաստանական իշխանութեան եւ նա-հանգապետին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դրութիւնը Պէկինի շուրջը, ինչպէս հա-ղորդում է «Temps» լրագիրը,—գնալով վառա-նում է: Ինչպէս արդէն յայտնի է, «Մեծ բուռնցի» խմբերը առաջ են դնում գէպի Տեանցիլին եւ պատրաստվում են յարձակվել քաղաքի վրա: Առաջ «Մեծ բուռնցի» խմբերը յարձակուներ են գործում գիւղերի վրա, ուր եւրօպացիները քիչ են, բայց այժմ գրութիւնը ծանր է եւ քաղաքական նշանաւոր հետեւանք-ներ կարող են առաջ բերել այդ յուզմունքնե-րը: Դրութիւնը մասնաւոր ծանրանում է այն պատճառով, որ չինացի զինուորները համարեա միշտ փախուստ են տալիս «Մեծ բուռնցի» խմբերից:

Չինուորական մի քանի թղթակցների կարծիքով, բոլորների հրամանատար գեներալ Բօտա այժմ դիմադրութեան հոգին է կազ-մում: Նա կատարելապէս ազատ է գործում, ամենեւին ուղարկութիւն չը դարձնելով նա-խազանքի եւ կառավարութեան վրա: Երբ կրիւզերի փախուստից յետոյ սարսափ տա-րածվեց Պրէտորիայում, իսկայն գեներալ Բօտան էր, որ կարողացաւ մի փոքր քաղաքից լու-սահատված բոլորներին Սակայն չը նայելով նրա քաղաքական եւ հայրենիքի համար գոհ-վելու պատրաստականութեանը, չը կարողա-ցաւ արգելել իր մարդկանց փախուստին: Պրէ-տորիայում իրկին յուզմունք տիրեց: Կատա-վարական մեղսանի կատարելապէս գաղաքեց գործելուց, մի խօսքով տիրեց քաւ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շուտով Շուտնդիայից Ալեքսանդրիա քաղաք կը բերեն այն լուսարձանը, որ դնելու են Նուբար-փա-շայի գերեզմանի վրա: Կայոյ գերեզմանոցում նա շինված է Փրանսիացի հարտադարձորի ծրագրով: Յուզարձանը սքանչելի է: Նա եղիպտական տաճարի հիշող նմանութիւն ունի: Յուզարձանը մօտ վեց մետր բարձրութիւն ունի եւ շինված է շուրջանդական կարմիր գրանիտից: Հայկական համայնքի մասնաժողովը մը-տադրութիւն ունի եկող ամսին սկսել արձան դնելու աշխատութիւնները:

«Daily Chronicle» լրագրին Վիեննայից հաղորդում են մի չափազանց նշանաւոր գիտն մասին բժշկակա-նութեան մէջ: Այդ գիտն արժան է Վիրցուրդի հա-մալարանի այն գիտնական ինտիմուտի մէջ, ուր Ռէնտգէն գտաւ իր անունը կրող հատազննիչները: Այժմ գտնված է, որ էլէկտրական մի քանի հասան-քներ բախտէրիւրդ ունեցնելու լատուութիւն ունեն եւ կարող են գործածվել շատ անվայել հիւանդութիւն-ներ բժշկելու համար, որոնք երեւում են գալիս բաւ-տերիաներով վարակվելու պատճառով: Բժշկութեանը, առում են, շատ հասարակ է, իրական, եւ բացի դրա-նից ցաւ չը պատճառող: Այդ գիտն արեւ է ատանա-րոյթ Յիրլէր: Նա արդէն մի քանի շաբաթ է, որ փոր-ձեր է անում փշացած ատամների արմատների եւ ֆիո-տուի բժշկութեան վրա: Շուտով կը հրաւարակվեն լիակատար հարկներ նրա փորձերի մասին:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1 մայիս

ՇԱՆԳՀԱՅ: Զինական գործերը խրամատներ են փորում Պէկինից դուրս, ուղղվելով իրանց թնդանութիւնը անգլիական եւ ամերիկական զենայնութիւնների վրա:

ԿԱՊԵՏԱՊՈՒՏ: Տեղի ունեցաւ առաջին մի-նիստը: Կառավարականը եւ ընդունվեց:

ԼՈՆԴՈՆ: Բուլլեր մայիսի 28-ին եւ 29-ին կորցրեց 2 օֆիցեր եւ 26 զինուոր, սպանված են 6 օֆիցեր եւ 126 զինուորական վիրահարված:

ԼՈՆԴՈՆ: Բորեսոս հեռագրում է Պրէտո-րիայից. «Մէտուէն հասաւ մինչեւ Գոկինգս-պրոյտ եւ տեսաւ, որ այնտեղ ամեն ինչ հա-գիստ է: Կրօնադատութեան մենք մեծ ոյժեր ենք պահում: Մէտուէն վերադառնում է դէպի Ռէ-նսոնէր գետը, ուր երկաթուղին ուղղվում է: Մենք երկի ամբողջ օրը պատրաստվում էինք Բօտայի հետ: Թշնամին կուտ էր մեծ վնասա-նութեամբ եւ չէր թողնում առաջ շարժվել մեր երկու թեւերի հեծկազմութեանը: Համարում են Պօլ-կէրիւ, սակայն, յարձակում գործեցին եւ վեր-բին այն բլուրը, որ գտնվում էր թշնամու գիւղի վրա: Թշնամին չեւ քաղաքից դէպի արեւմուտ»:



Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.